Փոխադրության գնահատման չափանիշները

Փոխադրության համար տրվելիք առավելագույն միավորը 20 է:

Փոխադրությունը գնահատվում է առավելագույնը 20 միավորով տրված տեքստի բովանդակության լիարժեք և գրագետ շարադրման դեպքում:

Փոխադրությունը գնահատվում է 2 բաղադրիչներով՝ 1. *բովանդակության վերարտադրում*, 2. *շարադրանքի որակ:* Յուրաքանչյուր բաղադրիչի համար առավելագույնը տրվում է 10 միավոր:

Յուրաքանչյուր բաղադրիչի համար տրվելիք առավելագույն միավորից միավորներ են հանվում՝ ըստ ստորև ներկայացված սկզբունքների:

Բովանդակության վերարտադրում
(առավելագույն միավորը՝ 10)

Տրվելիք միավորներից միավորներ են հանվում հետևյալ դեպքերում՝

- բովանդակային 1-2 սխալի համար՝ 1 միավոր, 3-4 սխալի համար՝ 2 միավոր, 5 և ավելի սխալների համար՝ 3 միավոր,
- բովանդակային գծի ամբողջականությունը խախտող 1-2 բացթողման համար՝1 միավոր, 3-4 բացթողման համար՝ 2 միավոր, 5 և ավելի բացթողումների համար՝ 3 միավոր,
- իրար հաջորդող նախադասությունների կամ պարբերությունների միջև տրամաբանական կապի 1-2 խախտման համար՝1 միավոր, 3-4 խախտման համար՝ 2 միավոր, 5 և ավելի խախտումների համար՝ 3 միավոր,
- խոսքի մուտքի՝ նախաբանի բացակայության համար՝ 1 միավոր,
- եզրափակիչ նախադասության (ամփոփիչ մտքի) բացակայության համար՝ 1 միավոր:

Շարադրանքի որակ
(առավելագույն միավորը՝ 10)

Այս բաղադրիչն իր հերթին բաղկացած է 4 բաղադրիչներից՝ 1. *ուղղագրություն,* 2. *կետադրություն*, 3. *բառագործածություն*, 4. *քերականություն:*

Սրանցից յուրաքանչյուրից թույլ տրված սխալների համար միավորներ են հանվում՝ ըստ ստորև տրված կարգի:

1. Ուղղագրություն.
    - 1 սխալ – 1 միավոր
    - 2-3 սխալ – 2 միավոր
    - 4-5 սխալ – 3 միավոր
    - 6 և ավելի սխալ – 4 միավոր

2. Կետադրություն.
    - 1-2 սխալ – 1 միավոր
    - 3-4 սխալ – 2 միավոր
    - 5-7 սխալ – 3 միավոր
    - 8 և ավելի սխալ – 4 միավոր

3. Բառագործածություն (բառագործածության սխալ պետք է համարել նաև կապերի և շաղկապների ոչ ճիշտ գործածությունը).
    - 1-2 սխալ – 1 միավոր
    - 3-4 սխալ – 2 միավոր
    - 5-7 սխալ – 3 միավոր
    - 8 և ավելի սխալ – 4 միավոր

4. Քերականություն (խնդրառություն, համաձայնություն, շարադասություն).
    - 1-2 սխալ – 1 միավոր
    - 3-4 սխալ – 2 միավոր
    - 5-7 սխալ – 3 միավոր
    - 8 և ավելի սխալ – 4 միավոր

Ցուցումներ.

- 2-րդ բաղադրիչից հանվող միավորների թիվը որոշ դեպքերում կարող է գերազանցել 10-ը, այսինքն՝ այս բաղադրիչի համար տրվելիք առավելագույն միավորը: Այդ դեպքում 2-րդ բաղադրիչը գնահատվում է 0, սակայն 1-ին բաղադրիչին տրվելիք միավորը մնում է **անխախտ.** 2-րդ բաղադրիչի սխալների համար 1-ին բաղադրիչին տրվելիք միավորներից միավոր **չի հանվում**:
- 1-ին բաղադրիչը համարվում է **գերակա:** Եթե այս բաղադրիչին տրվող միավորների թիվը չի գերազանցում 3-ը, այսինքն՝ աշակերտը տրվելիք 10 միավորից վաստակում է ընդամենը 3, ապա աշխատանքը գնահատվում է **անբավարար** անգամ այն դեպքում, եթե 2-րդ բաղադրիչի համար հանվող միավորներ չկան:
- Սեփական արժեքավոր մեկնաբանության, կարծիքի հայտնման կամ վերլուծական մտքի առկայության դեպքում տրվելիք միավորներին կարող է ավելացվել ևս 1 միավոր, եթե տրվելիք միավորների թիվը չի գերազանցում 20-ը:
- Շարադրանքում 3 ջնջում կամ ուղղում ունենալու դեպքում հանվում է 1 միավոր, 3-ից ավելի յուրաքանչյուր ուղղման կամ ջնջման համար հանվում է մեկական միավոր:

Լրացուցիչ ցուցումներ փոխադրության տրված տեքստի բովանդակային բաղադրիչի ստուգման վերաբերյալ

Աշխատանքի բովանդակային բաղադրիչը գնահատելու համար խորհուրդ ենք տալիս ուշադրություն դարձնել <u>**ընդգծված նախադասությունների**</u>՝ աշակերտի շարադրանքում առկայությանը կամ բացակայությանը:

Մասնավորապես, տեքստի գեղարվեստական, ենթատեքստային, հեղինակի ասելիքի բացահայտման համար առանձնահատուկ արժեք ունեցող մտքերի (տեքստում ընդգծվածների)՝ աշակերտի շարադրանքում իսպառ բացակայության (չվերարտադրման) դեպքում խուսափել աշխատանքը բարձր միավորներով (18, 19, 20) գնահատելուց:

Փոխադրության տեքստը՝ համապատասխան ընդգծումներով

Ծերունին ու ծովը

Ծերունին իր նավակով ձուկ էր որսում օվկիանոսում: Ութսունչորս օր էր, ինչ նա ծով էր դուրս գալիս և ոչ մի ձուկ չէր բռնում: Առաջին քառասուն օրը նրա հետ լինում էր մի տղա: Բայց որովհետև վերադառնում էր առանց որսի, տղայի ծնողներն էլ պահանջեցին ծով դուրս գալ մի ուրիշի նավակով, որը երեք լավ ձուկ բերեց հենց առաջին շաբաթը: Սրտի ցավով էր տղան տեսնում, թե ինչպես է ծերունին ամեն օր ձեռնունայն վերադառնում, և ափ էր գնում, որպեսզի օգնի նրան տուն տանել պարանները, կեռաձողն ու կայմի վրա փաթաթված <u>**առագաստը, որն ամբողջովին կարկատված էր պարկերի կտորտանքներով և փաթաթված վիճակում ջախջախված գնդի դրոշ էր հիշեցնում:**</u>

Ծերունին նիհար էր ու հյուծված, ծոծրակն ակոսված էր խոր կնճիռներով, իսկ այտերը ծածկված էին թուխ բծերով, որ առաջ են բերում արևադարձային ծովի հարթության մեջ արտացոլված արևի ճառագայթները: Ձեռքերը ծածկված էին խոր սպիներով, որ պարանն էր առաջացրել խոշոր ձուկ հանելու ժամանակ: <u>**Բայց նոր սպիներ չկային.**</u> եղածները հին էին, կարծես վաղուց անջուր մնացած

անապատի ճաքեր լինեին: Հին էր ամեն ինչը, բացի աչքերից. աննկուն մարդու ուրախ աչքեր էին դրանք, և դրանց գույնը նման էր ծովին:

Մի օր, երբ երկուսով վեր էին բարձրանում ծովափից, տղան ասաց նրան.

- Հիմա ես նորից կարող եմ քեզ հետ ծով դուրս գալ: Մենք արդեն մի քիչ փող ենք վաստակել:

- Ո՛չ,- ասաց ծերունին,- դու բախտավոր նավակ ես ընտրել, այնտեղ էլ մնա՛:

- Իսկ հիշո՞ւմ ես, թե ինչպես մի անգամ ութսունյոթ օր շարունակ գնում էինք ծով ու ոչինչ չէինք բռնում, բայց հետո էլ երեք շաբաթ իրար հետևից մի-մի խոշոր ձուկ էինք բերում,- ասաց տղան:

- Ես գիտեմ,- ասաց ծերունին,- որ դու հեռացար ինձնից ոչ թե նրա համար, որ չէիր հավատում:

- Հայրս ստիպեց, իսկ ես դեռ տղա եմ և պետք է հնազանդվեմ:

- Հասկանում եմ,- ասաց ծերունին:

- Բարի գիշեր, ծերո՛ւկ:

Ծերունու քունը շուտ տարավ, և երազում նա տեսավ իր պատանեկության Աֆրիկան: Հիմա այլևս երազում նա ո՛չ փոթորիկներ էր տեսնում, ո՛չ կանայք, ո՛չ վիթխարի ձկներ: Նա տեսնում էր միայն հեռավոր երկրներ ու ծովափին մոտեցող առյուծներ, որ կատվի ձագերի նման խաղ էին անում երեկոյան մթնշաղում, և նա սիրում էր նրանց այնպես, ինչպես այս տղային: Բայց տղային երբեք չէր տեսնում երազում:

Ծերունին հանկարծ զարթնեց, բաց դռնից նայեց լուսնին, հագնվեց ու դուրս եկավ: «Այսօր ես հավատում եմ, որ բախտս կբերի»,- մտքում ասաց ինքն իրեն:

Արևը հազիվ նկատելի բարձրացավ ծովից, և ծերունին նշմարեց մի որոր:

- Որսի հոտ է առել,- բարձրաձայն ասաց նա,- զուր տեղը չի պտտվում:

Ծերունին արդեն չէր կարողանում հիշել, թե առաջին անգամ երբ սկսեց ինքն իր հետ խոսել բարձրաձայն: Նա դանդաղ ու միահավասար թիավարում էր այն կողմ, որտեղ որորն էր պտտվում:

Ահա կարթաթելը ցնցվեց: Նա երջանիկ էր՝ զգալով՝ ինչպես է ձուկը ձգում լարը, և հանկարծ ինչ-որ անհավատալի ծանրություն զգաց: Ձուկը վիթխարի էր:

- Ախ, եթե տղան ինձ հետ լիներ,- ասաց ծերունին: Նա իր կյանքում խոշոր ձկներ շատ էր տեսել, ինքն էլ ժամանակին այդպիսի երկու ձուկ բռնել էր, բայց երբեք միայնակ չէր եղել:

Երրորդ անգամն էր արդեն արևը ծագում այն պահից, ինչ նա ծով էր դուրս եկել: Ստեպ-ստեպ նայում էր նա ձկանը՝ ստուգելու՝ չլինի՞ իսկապես երազում է տեսել: «Ամենաքիչը կես տոննա կլինի»,- մտածում էր նա, երբ հայտնվեց առաջին շնաձուկը, ապա երևաց երկրորդը՝ թուխ, եռանկյուն լողաթևերով: Նրանք ձկան հոտն առել էին… Երբ շնաձկները հոշոտելով հասան ձկան գլխին, ծերունին հասկացավ, որ ամեն ինչ վերջացած է: Նա զգում էր միայն, թե որքան թեթև ու արագ է ընթանում հիմա, երբ այլևս չի արգելակում ձկան ահագին ծանրությունը:

Նավահանգստի լույսերը մարած էին: Փողոցի լապտերների լույսի տակ ծերունին տեսավ ձկան հսկայական պոչն ու ողնաշարի սպիտակ, մերկացած գիծը:

Երբ առավոտյան տղան խրճիթ մտավ, ծերուկը քնած էր: Տղան համոզվեց, որ նա շնչում է, բայց երբ տեսավ նրա ձեռքերը, լաց եղավ: Նա կամացուկ դուրս եկավ խրճիթից՝ սուրճ բերելու, և ամբողջ ճանապարհին լաց էր լինում:

- Ինչպե՞ս է զգում իրեն,- ձայն տվեց ձկնորսներից մեկը:

- Քնել է,- պատասխանեց տղան: Նրա համար մեկ էր, որ նրանք տեսնում են իր արցունքները:

Երբ տղան խրճիթ մտավ, ծերունին դեռ քնած էր:

Նա երազում առյուծներ էր տեսնում: